ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՍՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2019 Թ.ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրամը տարեկան բյուջեով իրեն հատկացված միջոցներով աջակցում է հայագիտական կարևորագույն ծրագրերի իրականացմանը, հայագիտական միջազգային համաժողովների և հայագիտության կարևորագույն խնդիրներին նվիրված գիտաժողովների կազմակերպմանը, հայագիտական կարևոր աշխատությունների հրատարակմանը, հայագիտական տեղեկատվական ժառանգության թվայնացմանը, աշխատանքներ, որոնք շարունակվելու են նաև 2019 թվականին:
Հրատարակվում են

1. «Բանբեր հայագիտության» հնգալեզու հանդեսը (տարեկան 3 համար)

2. «Հիմնարար հայագիտություն» էլեկտրոնային (անգլերեն) հանդեսը (տարեկան 2 համար)։

3. Հայագիտական աշխատությունների հրատարակություն՝ այդ թվում.

1. Վազգեն Համբարձումյան – Հայերենը և կելտական լեզուները (համեմատական տիպաբանական տարբերակայնություն)
(VAZGEN G. HAMBARDZUMYAN, ARMENIAN AND CELTIC (COMPARATIVE – TYPOLOGICAL VARATIVITY) (15 մամուլ)։
2. Սուսաննա Հովհաննիսյան, Հովհաննես Թումանյանի կյանքը և ստեղծագործությունը (ռուսերեն), 350 էջ, 400 օրինակ, կոշտ կազմ։
3. Ավետիք Իսահակյան, Աֆորիզմներ (ռուսերեն), 350 էջ, 500 օրինակ, կոշտ կազմ, սուպեր շապիկով։
4. «Ժամանակակից Եվրասիա» (“Contemporary Eurasia”)
Պարբերականում հիմնականում տեղ են գտնում վերլուծական նյութեր միջազգային և տարածաշրջանային քաղաքական զարգացումների վերաբերյալ: Պարբերականի վերջին համարները լույս են ընծայվում անգլերեն:
5. Կոմիտասի ծննդյան 150-ամյակին նվիրված «Կոմիտասական»-ի երրորդ հատոր, 20 տպագրական մամուլ, 300 օրինակ։
6. «Հայ արվեստի հարցեր» միջազգային վեցամսյա գիտական պարբերական, 16 տպագրական մամուլ, 200 տպաքանակ։
7. «Լևոն Խաչիկյան – 100» (Ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, 2018 թ. հունիսի 28-30), 500 էջ, կոշտ կազմ։

4. Գիտաժողովների, կոնֆերանսների կազմակերպում, այդ թվում՝

1. **«Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ»,**
Նախատեսվում է երկօրյա գիտաժողով, որին կմասնակցեն մոտ 40 գիտնականներ հանրապետության գիտակրթական տարբեր

հաստատություններից: Հնարավոր են նաև մասնակցության հայտեր արտերկրից:

2. Միջազգային գիտաժողով՝ նվիրված Լևոն Շանթի ծննդյան 150-ամյակին: Գիտաժողովի սկզբում տեղի կունենա Շանթի ինը հատորով երկերի ակադեմիական հրատարակության շնորհանդեսը Գրականության ինստիտուտում:

3. **«Արևելյան աղբյուրագիտությունը և պատմագրությունը 21-րդ դարի սկզբին»** Անցկացման վայրը, ժամկետները. Երևան, 14-16-ը նոյեմբերի, 2019 թ. Մասնակիցների ընդհանուր թիվը 40:

4. **«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հայագիտության արդի հիմնահարցեր»** միջազգային եռօրյա գիտաժողով:

5. Հիմնադրամի ֆինանսավորանը ներկայացված հրատապ նշանակություն ունեցող գիտահետազոտական 4 թեմայի կատարում.

1. Արևելյան աղբյուրագիտություն – Հայաստանի թվային գրադարան – ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, գիտ. ղեկավար Ա. Բոզոյան:
2. Փափուկ ուժը որպես կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի իրացման մեխանիզմ Հարավային Կովկասում – ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության ինստիտուտ, գիտ. ղեկավար Լ. Շիրինյան:
3. Արցախի ազատագրված տարածքների ամրոցների հետազոտություն – ՀՀ ԳԱԱ Հնագիտության ինստիտուտ, գիտ. ղեկավար Գ. Սարգսյան:
4. Հայ գրականության պատմության ադրբեջանական կեղծարարությունը- ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտ, գիտ. ղեկավար Վ. Դևրիկյան: